



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻԱԿՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**

Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԱՆԴՐԱՆԻԿ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ  
 Ս. ՏՐԴԱՏ ԵՒ Ս. ԱՇԽԵՆ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ**

«Հայաստան Աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորն ու թագուհին, Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն, իրենց վարքով ու բարեսիրական գործերով մինչեւ այսօր ալ օրինակելի կը մնան մեզի համար, կը հանդիսանան հայ քրիստոնեայ ընտանիքներու ուղեցոյց», յայտարարեց Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան, Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն տօնին առիթով իր մատուցած Ս. Պատարագին ընթացքին:



Հայաստանի արքայական առաջին քրիստոնեայ ընտանիքին տօնը նշուեցաւ Շաբաթ, 30 Յունիսի երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի մատրան մէջ, որ, ինչպէս ծանօթ է, կը կրէ առաքինի թագաւորին ու թագուհիին անունը: Ս. Պատարագին ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան Լոս

Անճելըսի գլխաւոր հիւպատոսի ներկայացուցիչ՝ հիւպատոս Տիար Յարութիւն Կոճոյեան, մատրան բարերարուհի Տիկին Աշխէն Փիլաւճեան, Հոգեւորականաց Դասու անդամներ, Ազգային Առաջնորդարանի բարերարներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ Տիար Խաժակ Տիքիճեան, Ազգային Վարչութեան ու Ժողովականութեան ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ բազմաթիւ հաւատացեալներ:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց ներկայութիւնը յարգելի հիւրերուն ու հաւատացեալներու բազմութեան: Ան կանգ առաւ այն իրողութեան վրայ, որ Ազգ. Առաջնորդարանին յարկին տակ անդրանիկ Ս. Պատարագն է որ կը մատուցուի, ապա ան անդրադարձաւ տօնին պատմական հիմքերուն: «Այս տօնը թող ըլլայ հայ ընտանիքին օրը, թող մեր ընտանիքները մնան քրիստոնեական մեր անսնդութեանց եւ ուղիին հաւատարիմ, ու անոնց բարձրացուցած հաւատքի ջահը լուսաւորէ մեր ուղին», եզրափակեց Առաջնորդ Սրբազանը:

## ՏԻԿԻՆ ԱՇԽԵՆ ՓԻԼԱՎԺԵԱՆ 25,000 ՏՈՒԱՐ ԿԸ ՆՈՒԻՐԷ

Ս. Պատարագի ավարտին, Առաջնորդ Սրբազանն ու հոգեւորականաց դասը թափօրով ուղղուեցաւ սրահ, ուր տեղի ունեցաւ Աւետարանի ընթերցումը, փակման ու օրհնութեան աղօթքը:

Սրբազան Յայրը յայտարարեց, որ մատրանս բարերարուհին՝ Տիկին Աշխէն Փիլավճեան, գնահատելով օրուան մթնոլորտը, տօնական այս առիթով, իր կատարած իշխանական նուիրատուութեանց շարքին, Ազգային Առաջնորդարանիս կը կատարէ 25,000 տոլարի նոր նուիրատուութիւն մը: Նշենք, որ այս տօնը նաեւ ազնիւ բարերարուհիին անուանակոչութեան տօնն է:

Արարողութեան ավարտին, ներկաները երգեցին «Մեր Յայրենիք»ը եւ «Կիլիկիա» մաղթերգը: Առաջնորդ Սրբազանին թափօրը սրահին դուրս առաջնորդուեցաւ «Տէր Կեցո»ի խմբերգումով:

## FIRST HOLY MASS OFFERED AT THE PRELACY CHAPEL

On the evening of Saturday, June 30, the Feast of St. Dertad and St. Ashkhen was celebrated at the Prelacy with Holy Mass at the Chapel bearing the name of the first Christian king and queen of the Armenian nation. In attendance were Consul Mr. Haroutioun Kojoyan, representative of the Consul General of the Republic of Armenia, Chapel benefactor Mrs. Ashkhen Pilavjian, Prelacy benefactors, Central Executive Council member Mr. Khajag Dikijian, Executive Council representatives, and hundreds of faithful.

At the beginning of his sermon, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed the faithful to the first Holy Mass taking place at the Prelacy Chapel. He spoke of the historic background of the Feast, and concluded by saying: "Let this feast be a celebration of the Armenian family; let our families remain loyal to our Christian traditions and let our faith be guide us and illuminate our path."



At the conclusion of Mass the Prelate and clergy members headed in a procession to the "Dikran and Zarouhie Der Ghazarian" Hall where the Prelate offered his blessings and remarks. During this time the Prelate announced that on this joyous occasion, Mrs. Ashkhen Pilavjian pledged \$25,000 to the Prelacy, encouraged by the atmosphere of the feast.

## ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ ՓԱՍԱՏԻՆԱՅԻ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՈՅ ՄԷՋ

Կիրակի, 1 Յուլիսի երեկոյեան, Փասատինայի Ս. Սարգիս Եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ շարականներու եւ հոգեւոր երգերու համերգ, հովանաւորութեամբ ու նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Հօր:

Համերգին ներկայ էին Զրիստոնեական Դաստիարակութեան վարիչներէն՝ Հոգ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, Ազգային Վարչութեան անդամներէն Տիար Ներսէս Մելքոնեան, Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Խորեն Զիւլ. Պապօշեան եւ ծխական համայնքի ժողովականութեան ներկայացուցիչները:

Հոգեւոր երգերով ելոյթ ունեցան Տիկին Սալբի Զելէշեանը եւ իր երկու դուստրերը՝ Սարինն ու Սելան: Համերգի աւարտին Առաջնորդ Սրբազանը գնահատանքի եւ օրհնութեան խօսք արտասանեց:



## CONCERT OF SACRED SONGS AT ST. SARKIS CHURCH

On the evening of Sunday, July 1<sup>st</sup>, a concert of sacred songs performed by Salpi Keleshian and her daughters Sarine and Sela took place under the auspices of the Prelate at St. Sarkis Church in Pasadena.



In attendance were Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian, Executive Council representative Mr. Nerses Melkonian, Parish Pastor Rev. Khoren Babochian, representatives of the parish Board and organizations.

At the end of the program the Prelate conveyed his commendation and blessings.

**ՔՐԻՍՏՈՍԻ ԱՅԼԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ  
ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ Ս. ՍԱՐԳԻՍ ԵԿԵՂԵՑՒՅՑ ՄԷՉ**

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, յառաջիկայ Կիրակի, 15 Յուլիսը մեր եկեղեցւոյ հինգ տաղաւարներէն՝ Քրիստոսի այլակերպութեան տօնն է:

Այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ պիտի մատուցանի եւ յաւուր պատշաճի քարոզէ Փասատիւնայի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ:

**PRELATE TO CONDUCT HOLY MASS AT ST. SARKIS CHURCH  
ON THE FEAST OF THE TRANSFIGURATION  
OF OUR LORD JESUS CHRIST**

According to our church calendar, on Sunday, July 15, the Armenian Church will celebrate the Feast of the Transfiguration of our Lord Jesus Christ. On this occasion, the Prelate will conduct Holy Mass and deliver the sermon at St. Sarkis Church in Pasadena.